

նիւ կու հանէ ի գբոյ տառապանաց, որ ար-
ժանի էր մահու» (!) :

Պիրոմալլի ազատութեան համար Մովսէս
կաթողիկոսի բարեխօսութիւնը հակաժամա-
նակադրական է. Մովսէս իբր երկու ամիս յա-
ռաջ վախճանած էր : Նկատի կարող էր առ-
նուիլ Փիլիպպոս Վարդապետ, եթէ արտաքին
վկայութիւն մը ազատութիւնը Ուրբանոս Ը . ի
միջամտութեան չվերագրէր :

Այն չորս տարիները, զորոնք անցուց Պի-
րոմալլի Հայաստանի մէջ, շահագործեց սոր-
վելու հայերէն լեզուն ի գիր եւ ի բան : Որով-
հետեւ բնատարգելութենէն ազատելէն ետքը
անհաճոյ էր իր ներկայութիւնը Նախիջևանի
Արքեպիսկոպոսի թեմին մէջ, Պիրոմալլի
գնաց Նրեւան ուր գտաւ Փիլիպպոս վարդա-
պետի, կաթողիկոսական տեղապահի հիւրա-
սիրութիւնն ¹⁵ :

Այս տեղեկութիւններէն բազմօք կը տար-
բերի ինչ որ կը պատմէ Հ. Մ. Չամչեան Պի-
րոմալլի Հայաստան անցուցած առաջին չորս
տարիներու մասին. միայն նիւթի ամբողջու-
թեան համար յառաջ կը բերեմ հոս անոր տո-
ղերը. «Ի նմին ամի եկն յարեւմտից ի Հայաս-
տան լատին կրօնաւոր ոմն Պօղոս անուն ի
կարգէ Դոմինիկեանց՝ Փիրոմալլի ասացեալ՝
Սիդերնացի ի Կաղարրիոյ, առաքեալ ի քարո-
ղութիւն յարեւելս հրամանաւ սրբազան պա-
պին Ուրբանոսի Ը . : Շրջեալ սորա արեւելեան

¹⁵ Անդ :